XXIII

ՄԱՐՏԻՐՈՍ ԽԱԼԻՖԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (XVIII Դ.)

Այս բնագիրը Հարութիւն Խալֆայանի անունով հրատարակեց Գ. Աղանյանցը[1]։ Հարութիւն Խալֆայանը որպես հեղինակ առաջին անգամ հիշվում է «Նոտարք Հայոց»-ում[2]։ Մի փոքր ավելի ուշ, 1900 թ. Խ. Դաղյանի ձեռագրերի ցուցակում (Բ մաս) «Ղևոնդ վարդպ. Փիրղալէմեանցի անտիպ աշխատութիւնները» շարքում հիշվում է «Խալֆայեան տէր Յովհաննէս քահանայ»-ի պատմությունը[3]։ Վերջինիս ժամանակագրական սահմանների մասին Հ. Թոփչյանը նույն տեղում գրում է. «Սկսում է (հեղինակը—Վ. Հ.) շատ հին ժամանակներից և մասնավորում է իւր պատմությունը Վանի և նրա բգեշխների վերաբերմամբ և հասցնում է մինչև 1800 թիւ. «մինչև ցվախճան Ղուկաս կաթուղիկոսին Էջմիածնի և Պետրոս պատրիարգին Երուսաղեմի։ Պատմութիւն սորա ճոխ գանձ է Վանայ ստորագրութիւնն գրողին. գրեալ է զտարեգրութիւն իւր աշխարհիկ ոճով՝ գաւառական բարբառաւն Վանայ...»[4]։ Իսկ Հարութիւն Խալֆայանի անունով հրատարակված ժամանակագրությունը վերջանում է ճիշտ այդ վկայություններով։ Այստեղ էլ շարադրված նյութը գերազանցապես վերաբերում է Վանին և շրջակայքին, նրա փաշաներին. լեզուն ևս պարզ է, գրաբարի և տեղական բարբառի մի խառնուրդ։ Բացի դրանից, և Գ. Աղանյանցի, և Հ. Թոփչյանի ձեռքի տակ եղել են Ղ. Փիրղալեմյանի հավաքած նյութերը։ Նշանակում է, ինչպես դժվար չէ հետևցնել, խոսքը վերաբերում է միևնույն բնագրին։ Այսպիսով, հեղինակի հարցում, թե ով է ճիշտ՝ Գ. Աղանյանցը, թե Թոփչյանը, դժվարանում ենք հաստատ բան ասել, ենթադրելով, որ այստեղ առկա է մի պարզ թյուրիմացություն։ Մեզ թվում է հեղինակի անունը ճիշտ է հաղորդել Գ. Աղանյանցը[5]։

---

[1] «Դիւան Հայոց պատմութեան», գիրք Ժ, էջ 123—152։

[2] Էջ 171, ծանոթ. 1։ Հենվելով Ղ. Փիրղալեմյանի հաղորդման վրա, պրոֆ. Հ. Աճառյանը Հ. Խալֆայանին համարում է XV դարի «կամ ավելի ուշ» ողջանի մատենագիր («Հայոց անձնանունների բառարան», հտ. Գ, Երևան, 1946 թ., էջ 520)։

[3] Յ. Թոփչեան, Ցուցակ ժողովածուաց Դաղեան Խաչիկ վարդապետի, մասն Բ, Վաղարշապատ, 1900 թ., էջ 58։ Հենվելով այս վկայության վրա, պրոֆ. Հ. Աճառյանը Հովհաննես Խալֆայանին համարում է XVIII դ. վերջի և XIX դ. առաջին կեսի անձնավորություն («Հայոց անձնանունների բառարան», հտ. Գ, էջ 704)։

[4] «Ցուցակ ժողովածուաց Դաղեան Խաչիկ վարդապետի», մասն Բ, էջ 58։

[5] Մի այլ ժամանակագրության մասին, որը վերահրատարակեցինք 1951 թ. (Մատ, I, էջ 355 –380) Գ. Սրվանձտյանը գրում է. «Հետևյալը՝ որ հետաքրքրական է պարունակութեամբն, եղբայրս Գ. Ցակոբ Սրուանձտեանց իմ յանձնարարութեամբս Վանայ մէջ ձեռագրէ մը օրինակելով գրված էր ինձ. և կը ծանուցանէ թէ՝ ձեռագրին սկիզբն ու

Սակայն հաստատ է այն, որ ժամանակագրության հեղինակի աշխարհական անունը եղել է Մարտիրոս և ընագրում էլ երկիցս նա հիշվում է այդպես, իրեն կոչելով «Մարտիրոս Խալիֆայ»։ Այդ պատճառով էլ ժամանակագրությունը վերահրատարակեցինք Մարտիրոս Խալիֆայի անունով։ Վերջինս, ինչպես հաղորդում է Գ. Աղանյանցը, ծնվել է Վանում 1775 թ. փետրվարին[1]։ Քահանա ձեռնադրվելիս (1800 թ. հետո) փոխում են աշխարհական անունը և կոչում Հարություն, որը մինչև իր քահանայանալը կազմել է սույն ժամանակագրությունը[2]։ Վերջինս սկսվում է 623 թ. վկայությամբ և ավարտվում 1800 թվի հիշատակություններով։ Բնագրի սկզբի վկայությունները կցկտուր են և համառոտ, երբեմն մեծ ընդհատումներով։ Ժամանակագրությունը մանրամասն և հետաքրքիր է դառնում XVIII դարի սկզբից։ Սխալ կլիներ ամբողջ ժամանակագրությունը վերագրել Մարտիրոս Խալիֆային, ինչպես արդեն ցույց ենք տվել, մի մասն է պատկանում նրան[3]։ Ուստի հիմնավոր չէ Լեոյի կարծիքը, թե Հ. Խալֆայանն է արտագրել իր ժամանակագրությունը մի հեղինակից[4]։ Ընդհակառակը, Մարտիրոս Խալիֆան մի պատրաստի ժամանակագրություն շարունակել է XVIII դ. 80-ական թվերից։ Հենց այդ թվերի վկայություններից էլ սկսած հեղինակը եղել է այս կամ այն դեպքի ժամանակակից կամ ականատես։ Այսպիսով, ժամանակագրության միայն վերջին մասը՝ XVIII դ. 80-ական թվերից սկսած կազմել է Մարտիրոս Խալիֆան, իսկ սկզբի մեծագույն մասը՝ մեկ ուրիշը, գուցե նրա հայրը։ Ժամանակագրության տեղեկությունները վերաբերում են Վանին և շրջակայքին, նրա փաշաներին, սրանց կամայականություններին, ասպատակություններին, մի խոսքով առավելապես Վանի քաղաքական անցուդարձին։ Ինչքան էլ հետաքրքիր և ուշագրավ լինեն այս վկայությունները, որոնք վերաբերում են Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայ աշխատավորության վիճակին, այնուամենայնիվ, այդ տեղեկությունները լրիվ չեն և ունեն մասամբ միակողմանիության բնույթ, որովհետև Մարտիրոս Խալիֆայի մոտ չենք գտնում հայ աշխատավորության, ներքին կյանքին վերաբերող, կամ ժողովրդի «սեփականն»

վերջը թղթեր թափած էին. կրսէ նաև թէ սոյն ձեռագրի մէկ օրինակն ևս Երեմիա եպիսկոպոսն ունի, և թէ ամբողջն կը գտնուի մ. Յոհ. Քոլոզ վարժապետին հով. որում կցորդած է ժամանակակից անցքերն ևս յիշեալ վարժապետն». («Մանանայ», կ. Պոլիս, 1876, էջ 339—340,։ Այս և Հարություն Խալֆայանի անունով հայտնի մամանակաղրության աղբի մասին տե՛ս ՄԺ, I, էջ 353)։ Հ. Թոփչյանի հիշած Հովհաննես Խալֆայանին (խալիֆա նշանակում է վարժապետ) և Հովհաննես Քոլոզ վարժապետին չենք կարող նույնացնել, որովհետև առաջինը մահացել է 1840 թ. և թաղվել Աբարուց եկեղեցում (Հ. Թոփչյան, «Ցուցակ...», մասն Բ, էջ 58), իսկ վերջինս դեռ կենդանի էր XIX դ. 70-ական թվերին (որա ընդարձակ և չափածո պատմությունը՝ «Տեսարան դիպուածոյ Վասպուրականի» խորագրով գտնվում է Մատենադարանում 9424 №-ի տակ։ Այն անտիպ է. պատմությունն սկսվում է 1790 և հասնում մինչև 1870-ական թվականները։ Այս աշխատության ներածականը, որը գրել է Ս. Շալջյանը, պահվում է Հայկական ՍՍՌ ԳԱ-ի Պատմության ինստիտուտի արխիվում, տե՛ս Ս. Շալջյանի ֆոնդ)։

1 «Գիւան Հայոց պատմութեան», դիրք Ժ, էջ Խե։

2 Նույն տեղում, էջ Խե։

3 ՄԺ, I, էջ 353, ծանոթ. 1-ին։

4 «Պատմութիւն Հայոց», հատ. Գ, Երևան, 1946 թ., էջ 967։ Այդպես պնդել, նշանակում է ենթադրել, որ ամբողջ ժամանակաղրությունը կազմել է Հ. Խալֆայանը։

հարստահարիչների՝ հոգեորականների, խոջաների, աղաների շահագործման մասին ոչ մի խոսք։

Այս ընդդիրը հրատարակում ենք ըստ «Դիւան»-ի, որի հրատարակությանը հիմք է հանդիսացել Ղ. Փիրղալեմյանի թերի ընդօրինակությունը[1], այդ է պատճառը, որ բնագրում եղած բազմակետերը պատկանում են առաջին հրատարակչին։

[1] «Դիւան հայոց պատմութեան», գիրք ԺԵ, էջ 36։

ՀԲ (623) Արճէշն էառ Թուրքն, ըստ Սամուէլի ՀԴ (625)-ին[1], 123

ՃԺԴ (664) երևեցաւ սուրբ Խաչն Վարագայ, ի ժամանակս Վարդ Պատրկին։

ՆԿԵ (1016) Սենեքերիմ թագաւորն Վասպուրականի ետ զՎան ի Վասիլ թագաւորն Յունաց և էառ զՍուվաղ փոխան նորա. և ինքն գնացեալ անդ հինգ որդւովքն։

ՈԿԲ (1213) մեռաւ Մխիթար վարդապետ մականուն Գօշ կոչեցեալ։

ՊԼԵ (1386) Լա[ն]կ Թամուր եկն ի Թաւրէզ, ի Վան. աւերեաց զամենայն երկիրն. և շատ գերի առեալ տարաւ ընդ ինքեան յերկիրն Սմրզանտայ. և անդ սատակեցաւ ՊՃԵ (1406)[2]։

ՊՀԸ (1429) Ջհանշահն էառ զՇամշուլտոյ բերդն[3]։

ՊՂ (1441) Լուսաւորչի աջն ի Սբսայ գողացան և բերին յԷջմիածին։

ՋԲ (1453) սուլթան Մահմատն էառ զՍտամբօլ։

ՋՂԹ (1550) սուլթան Սիւլէյման էառ զՎան։

ՌԺ (1561) Շամիրամայ ջուրն բերին Վանայ այգիքն. չորս ամիս դատեցան, ութ հազար սարակ քաղաքէն գնաց, թող զգիւղօրէիցն։

ՌԻԹ (1580) մեծ և առաջին շահ Արասն ի Մաշադ թաղթ նստաւ[4]։ 124

ՌԽ (1591) Քօռ օղլին, Գղիր օղլին, և այլ բազումք եղէն Ջալալիք։

ՌԾԳ (1604) Ջղալ օղլի սարդար Սինան փաշայն եկն ի Վան, և գնաց ի վերայ շահին։

ՌԾԵ (1606) երկրորդ անդամ եկն Ջղալ օղլին և կոտորեցաւ ի շահէն. և գնացեալ ի Ցամիթ սատակեցաւ։

Ի սոյն թուին մեծ սով անկաւ, որ շուն և կատու կերին, նաև մարդագայլքն երևեցան։

ՌԿԳ (1614) առաջին շահ Արասն զԷջմիածնի քարերն և զԼուսաւորչի սուրբ աջն տանել ետ ի Ցասպահան։

ՌՀ (1621) յունվարի 12, ծովն Ըստամբօլայ պաղեցաւ, որ մարդ շրջէր ի վերայ։

ՌՁԴ (1635) սուլթան Մուրատն եկն յԵրևան և ինն օր էառ զնա. եկն ի Թաւրէզ և անտի ի Վան, և ապա գնաց ի Ստամբօլ,

և դարձեալ զկնի երից ամաց եկն ի վերայ Բաղդատայ և յաւուրս երեսուն և ութ մեծաւ զօրութեամբ էառ զնա[5]։

Ռղէ (1648) ապրիլ 2, աւագ ուրբաթու գիշերն, սաստիկ շարժ եղե ի Վան քաղաքին և շատ աւերութիւն եղև և բազում մարդիկ մեռան[6]։

Ռձ (1651) անիծեալն Զօմար և Խօշա || պայ պարոնն թալանեցին Վարագայ վանքն. և սուրբ Նշան ևս դերի տարան, զոր Մարխաս Զալապին ազատեալ երեր զկնի չորս ամաց, և եգին յեկեղեցի Տիրամօրն։ 125

Ռձիէ (1678) Բաքըր փաշայն էր ի Վան. սա Խօճայ Ալխասն կախեաց, որ Լէշկեր ասէին, հետ կլուն շատ կռուան։

Ռձիը (1670) Մուսլի փաշէն էր ի Վան, որ հրամայեաց Հայոց մորուս թողուլ։

Ռձիթ (1680) Զանփօլատ օղլին. սա զԿայի լաճ և զՉրթաւ օղլին խեղտեաց. հրամայեաց Հայոց գօտիկ վեր առնուլ և գտակ դնել. սորա Ջորին ծընաւ և ինքն աստ մեռաւ։

Ռձլ (1681) Նիշլի Ալի փաշէն էր ի Վան. քարախառն կարկուտ եկն Ըսամրօլ, որ մէկ՝ հարիւր դրամ կշռեցին։

Ռձլա (1682) Զալանդլի Ալի փաշէն. ի սորա ժամանակն շինեցաւ սուրբ Ցակորն։

Ռձլբ (1683) Կօճայ Օմար փաշէն, Խօշապայ Միր-Շամզդին զնալբանդ օղլի Ղազր աղէն և Շաթր օղլի Իբրահիմ աղէն սպանեց։ Ի սոյն թուին դարձեալ մարդագայլն երևեցաւ։

Ռձլդ (1685) Ճաֆար փաշէն. սա զգող Մանսուր և զկոյր Էդգարն կախեաց. և պլիկ ետուր։

Ռձլե (1686) խաղնատար Ալի փաշայն էր ի Վան։

Ռձլզ (1687) Կայայլի Կօզօղլի Մահմատ փաշէն եկաւ. չի թողին քաղաքն, ելան Աւանց դէմ թալանեցին, խաղք ու [խայտ]առակ յետ չամխեցին։

Ռձլը (1689) Կաթր Հասան փաշէն. սա զՋամուշ Մահմատ աղէն, Շապան աղէն և Ջաֆար աղէն տարաւ Արտամետն սպանեց. տղայոց մահն եղև շատ։

Ռձլթ (1690) Զոլախ, ըստ ոմանց Թօփալ, Օմար փաշէն եկաւ։ 126

Ռձխ (1691) Տուրսուն Մահմատ փաշէն եկն ի Վան։

Ի սոյն թուին սուլթան Սիւլէյման առաքեաց վայվատայ ի քաղաքս Վան, և թղթով ժողովեաց զխարաջն՝ ալայ, աւսատ, ատնայ։

Ռձխա (1692) Սօֆի կամ Սարի Օմար փաշէն եկաւ Վան. Մարդանենց Ատոմն և Շէկ Միրզէն կախեց։

Ի սոյն թուին դարձեալ Կօճայ Իսմայիլ փաշէն եկն ի Վան. սա խարաջն ինքն ժողովեաց։

Ռձխբ (1693) Մուրթաղայ փաշէն եկն ի Վան. սա չաւուշ քահեայսին սպանեց։

Ռձխգ (1695) Գուոճի Մահմատ փաշէն եկն ի Վան. սա երկու անգամ մահթու էառ վանօրէից։

ՌՃԽԵ (1696) Զարաֆիլ օղլի, ըստ ոմանց Զալապի Իւսիւֆ փաշայն եկն ի Վան։

ՌՃԽԶ (1697) Տաֆայ Տուրսուն Մահմատ փաշէն եկաւ Վան։

ՌՃԽԷ (1698) Տաֆայ Ծերունի Ալի փաշէն եկն ի Վան, ըստ
5 ոմանց Իսմայիլ փաշէն. սա գնաց վերայ Մանծկերտու., Շատօն սպանեց։

ՌՃԽԸ (1699) Վանայ կուլ մարդագլուխ ըստ՝ առեց Հայոց։

ՌՃԽԹ (1700) Տաֆայ Սարի կամ Սըրքայ Օմար փաշէն եկն ի Վան. գնաց վէր Խիզնայ, մանզուլ եղաւ գնաց։ Վանայ կուլ
10 կրկին Հայոց մարդագլուխ մէկ զուռուշ խարաջի կոտոր ժողովեցին դաւթարով։

ՌՃԾ (1701) Ծերունի Իբրահիմ փաշէն եկն ի Վան, Ի սոյն թվին Ծերունի Իբրահիմ փաշէն աստ մեռաւ։

Ի սոյն թուին մարտի 7, մեծ պահոց, սաստիկ շարժ եղև 127
15 Վան, որք ամենեքեան դուրս ելին ի քաղաքէն։

ՌՃԾԱ (1702) Կարտ Կուլախ Մուստաֆայ փաշէն եկաւ Վան. սորա աւուրս Վան քաղաքի ոհաթ կարի նեղացեալ էին ի ոչ Թօխմախ Միրաքէն, գնացեալ օր մի զտուն կոխեցին, և նա մտեալ էր ի հաւու բոյնն, փ[ն]տռելով դտին, և չուան եղեալ յոտս
20 քաշելով մեռուցին, և այնպէս բերեալ արկին միջին դարգախն։ Փաշայն իմացաւ, որ խօճայ Զանգուլն էր արեր, Արապկերցի Զիման Զալապին ի հետն էր, նա յղեց բերաւ տարաւ մօտ փաշայն. փաշայն Զանգուլն խեղդել ետ, և զվեց հարիւր զուռուշ ըստակ էառ քաղաքիցն. թէ «Զեր գլխու էսպէս բա՞ն անէք»։

25 ՌՃԾԲ (1703) Ավտի փաշէն եկն ի Վան։

Ի սոյն թուին Դահիճենց խօճայ Սաֆարն Ֆռանկստանայ եկն, հարիւր քէսի մալ ունէր, կուլ թալանեց։

ՌՃԾԳ (1704) յունիս 28, Տօռիճան Ահմատ փաշէն եկաւ Վան. սա Աւանուց սուրբ Յովհաննէս ժամատունն շինեաց. ասէին
30 թէ Հայու տղայ է։ Թագաւորէն դափուջիպաշի եկաւ տեղս՝ գլուխ կտրեց։

Ի սոյն թուին Վարդան վարդապետ սուրբն, Բաղիշեցի, վախճանի։։

ՌՃԾԴ (1705) դաւթարտար Քօսայ Խալիլ փաշայն եկն ի
35 Վան։

ՌՃԾԵ (1706) Մաղթուլ օղլի Ալի փաշայն. սորա աւուրս ոհաթն նեղացեալ ի հարկապահանջութենէ երկրով կամէին Ըստամբոլ գնալ. բխտիարներն եկին ի Բանտի-մահուց յետ դարձուցին։

40 Ի սոյն թուին շիրէն հարիւր լիտր երեք զուրուշի ծախվաւ։

ՌՃԾԶ (1707) շինեցաւ սուրբ Պետրոս Առաքելոյ եկեղեցին 128
ձեռամբ տէր Իգնատիոսին։

ՌՃԾԷ (1708) Զարքաղ Մահմատ փաշէն եկն ի Վան[8]։

ՌՃԿ (1711) օգոստոս 25, Ռաջապ փաշէն եկն ի Վան. սա
45 սպան զԱլխան օղլի Հասան աղէն. շատ ասքարով, մեծ թօփով, գնաց վէր Խոշտպայ բերդին, ի ճանապարհին թալանեց Զեոնկայ

բերդն՝ շատ գանձ առեց, զպարոնն փոխեաց, և ինքն մեծաւ փառօք դարձաւ ի Վան։

Ի սոյն թուին էին Վարագայ առաջնորդ Բարդուղիմէոս և Ստեփաննոս վարդապետքն, և սուրբ Նշանն այսմ ամի հանին
5 Տիրամայր։

ՌՃԿԱ (1712) Հասան փաշէն եկաւ. ի սորա աւուրս Առճիշու դատաւորին երկու գոմէշք ջամուկ[9] ծնան։ Երկիրն Գաւաշու, Թուրքի մի երեք խոր ցորէն, դարի տարեկան քար դարձաւ։

Ի սոյն թուին, դեղին սոլ ու մրխս Հայու եասաղ արին։

10 ՌՃԿԲ (1713) վազիր քեահասի Արրահման փաշէն եկն ի Վան։ Ի սորա ժամանակն նորոգեցաւ Կոցու սուրբ Կարապետի եկեղեցին։

ՌՃԿԳ (1714) Կօջայ Մուրթազայ փաշային. շարժ եղև Վան։ Եւ ի սոյն ձրմռան կարի շատ ձիւն եկաւ, և սաստիկ ձմեռն եղև, որ պղնձէ գուդումք պտտառեցան ի մէջ տանց. լուաք որ Արճէշ
15 քաղաքն մէկ լիտր փթիրն ըռու[պ?] եղև, մէկ բարդ խոտ երեք ղուռուշ, մէկ կարար յարդն ղուռուշ կէս, երկու խուրձ խոտ լաւ ոչխար մի տային. Աստուած ազատէ[10]։

ՌՃԿԵ (1716) յունվարի 18, Բալլի Բուզուք Մահմատ փաշային եկն ի Վան. || սա գնաց ի վերայ Մահմուտանայ սաֆար, 129
20 և Ապաղու դեղօրայսն եղարկ, և զվեց հարիւր գերի երեր, երեսուն հազար ոչխար, անթիւ ձի և ջորի, եզ, գոմէշ և կով երեր. և Ջամուշու Խալիլ աղան սպանեց. և ինքն մեծ Զատկի խթման օրն սատկաւ։

Ի սոյն թուին օգոստոս 26, Դալի Հասան փաշէն հետ կլուն
25 կովան. կուլ ջարդեց ետ դարձոյց. ամէն եաբալու վիրաւոր, մերկ տկլոզ, քանզի քառասուն բայրաղ. լաւանգ ունէր։

ՌՃԿԶ (1717) յունվար 10, Զալապի Ուսուֆ փաշէն եկն Վան, մայիս 22 մանզուլ եղև գնաց. յուլիս 3 դարձեալ եկն ի քաղաքն։

ՌՃԿԷ (1718) Բալաջի Մահմատ փաշէն եկն ի Վան. մեծ
30 խռովութիւն եղև հետ Նոհ աղի լաճուն և հետ Ալի աղին. շատ կռիւ արին. էլան բերդ թոփ զարկին. Նոհ աղի լաճ և Ալի աղէն փախան, Ալի աղի տուն այրեցին։

ՌՃԿԸ (1719) յունիս 17, եկն Բօրփլի օղլի Ավտուլայ փաշէն թաւթիշ։ Բալաջի փաշէն ևս, տեղս մանսուպ էր, գնաց դէմ. փա-
35 շայն եկն յԱտնականց Ալի աղէն և Նոհ աղի լաճն սպանեց. եկաւ Աւանց և բերդն յանձնեց դիզաարին. և ինքն 15 օր նստաւ և ապա գնաց։

Ի սոյն թուին օգոստոս 30, եկն Հաճի Ալի փաշայն և սպան զնաման աղի լաճ՝ Ցասան աղէն, գնամաթի լաճ՝ Ալի աղէն. և
40 միւս աղէքն երկեան յահէ, վասնորոյ Լօթոնց Ուսուֆ աղայն իւրով զօրօքն ել ի Ներքին բերդն՝ եհար վրան. կանգնեաց ղբայրազն մինչ ի լոյս մաշկալ վառէր. և թոփ ձգէր դէմ փաշային. Խալիլ աղայի լաճն և Նոհ աղայի լաճն, որ փախած էին Ավտուլայ փաշայէն, եկին և ելին ի կողմն || փաշային. 22 օր գիշեր 130
45 կովան մինչի հինգ հարիւր թոփ աւել զարկին միմեանց. և ապա Խալիլ աղայի լաճն էառ ի փաշայէն յիսուն ընտիր մարդ և նո-

քօք գնացեալ ի Վերին բերդն, ի Քասուկէն իջեալ Ներքին բերգն, մինչ Ուսուֆ աղայն և զորք իւր անհոգ նստեալ կային. սոքա առաւօտեան յանկարծակի հասին ի վերայ նոցա, հարին, վիրաւորեցին և առին զինչս նոցա զամենայն. և կալեալ զգլխաւորսն
5 նոցա զՈւսուֆ աղայն, զԻբրահիմ քահեայն, զՄուստաֆայ բակն, զՕսման աղայն և զԴուզանսզի երեք լաճն և զմեծամեծս նոցա զամենայն՝ զձեռն կապեցին և այլքն ցրվեցան. և զկապեալսն առեալ տարան դէմ փաշային. նոյն ժամայն տասն և չորսն ի նոցանէ գլխատեաց, և տասն հոգի ի կաղուխն էզարկ՝ Նոհ աղի
10 կորն՝ Կանլի Մուսթաֆէն, Կարայ Ցասանն, Փաչաջու Փշիկն և Նամաթի լաճն սպան. ի սոյն պատճառէն ծաղկազարդի կիրակին Հաւքոզի խօջայ Մաղաքէն կոր Ուսուֆն կախեց. Բայրամ քէհէն կանաչ գլօխ մօլէմ ետ գնել ի յէշ և շուկայն շուռ ածել դալալով. Սա սարայի բակն մեծացուց, նոր դուռ մի երաց, զոր Ալի փաշայի
15 գուռ ասեն, ի ծովակողմն. սա աւելի խարաջմ էառ ի Հայոց, և Թանրեհ արաց, որ Թուրք օլան սիլտհ, խանջալ, ձեռք չառնէ. և վասն խնդրոյ տէր Իգնատիոսին Պետրոս առաքելոյ դուռն մեծացուց չորս աստիճանաւ բարձր, Յունվարի 20 մանզուլ եղև գնաց. միւս օրն մօլայքն ժողովեցան եկին Պետրոս առաքելոյ
20 դուռն քակեցին. տէր Իգնատիոսն փախաւ. կալան հինգ մեծ իշխան ի քաղաքէն, և եդին ի բանտ եօթն օր և հինգ քէսայ տուգանք առին եօթն եկեղեցեացն. և ապա հրամ[ան] ետուն առաջի փոքր դրան ‖ շինելոյ. այս ամէն չարիքս Խալիլ աղայի լաճն 131
գործեաց. և ինքն փախեաւ Ըսամբոլ և անդ սպանին և ձգեցին
25 մարմին շանց կերակուր։

Ռճէ (1721) փետրվար 17 Տաֆայ Ավտուլայ փաշայն եկն ի Վան և մայիս 27 գնաց վէր Խօշապայ բերդին։

Ի սոյն թուին Օսմանլու էառ ըզԹլֆիս։

Ռճէբ (1723) ապա հրաման եկն ի Թագաւորէն՝ եկին Վան
30 Ամասիոյ, Ուրհայու, Զանգուու փաշայքն և այլ բազում փաշայս իւրեանց զօրօքն առ Ավտուլայ փաշայն, որ եղև սարասքար և գնաց ի վերայ Պարսից. և էառ ըզՀօյ, զՈրմի, զԵրեվան, զԹավրէզ, զԱրտաւիլ, զՀամատան, զՄուղան և այլ բազում տեղիս, և որչափ գերի տարան և արիւն հեղին, և աւար առին թիւ ոչ մտանէ.
35 զի ոչ մնաց երկիր որ չորս հինգ հարիւր գերի ոչ տարան. և Ավտուլայ փաշայն ամենայն տեղիս փաշայ և զօրագլուխ եդ. և ինքն եկաց ի Թաւրէզ մինչի Ռճէե (1726) թիւն։ Եւ ապա եկն Ալի փաշայն հրամանաւ Թագաւորին ի Թավրէզ. և Ավտուլայ փաշայն օգոստոս 18 եկն ի Վան. և իւր որդի Աբդրահման փա-
40 շայն եդ ի տեղի իւր և ինքն սեպտեմբեր չորսին գնաց։

Ռճէզ (1727) Աբդրահման փաշայն. սա ի մէջ սարային բազնիս շինել ետ. և Աւանուց տղմուտ տեղիքն իբրև հազար քայլ տեղ դօշամայ արաց. քանզի մանուկ էր և գինասէր. ի Ըստամբոլ տեսեալ էր փոքր նաւեր՝ շինել ետ և փոքր թօփեր ետ դնել
45 ի մէջն. և ամէն երեկոյի սակաւ մարդով մրտանէր ի նաւսն մաշկալով, գինով, սազով. գիշերն ողջ շրջէր ի վերայ ծովուն,

Թօփ ձգէր աստ և անդր. ուտելով և ըմբելով ուրախանայր և ‖ 132
յառաւօտն ելեալ գնայր յիւր սարայն. ի մարտի 18 մանզուլ եղև.
ե գնացեալ ի Տրապիզոն և անդ մեռաւ։

ՌՃՀԷ (1728) Բանլի Մուսաաֆայ փաշայն եկն ի Վան։

5 ՌՃՀԸ (1729) Արարկերցի Մահմատ փաշայն, որ Քալաջի ասէին. սորա աւուրս եկն վոյվատայ ի Վան և խարաջ էառ։

ՌՃՀԹ (1730) Կարայ Մուստաֆայ փաշէն, որ Թաւրէզ սարասքեր էր, փախաւ էկաւ մօտ չաուշպաշին, յապս արին, յետոյ գնաց։

10 ՌՃԶ (1731) Ցարիֆի Մահմատ փաշէն եկաւ Վան։

ՌՃԶԱ (1732) մեծ Թամուր փաշայն եկն ի Վան ապրիլ 3, աւադ երկուշաբթին, և միւս օրն ելաւ գնաց Արզրում. մայիս 6 դարձեալ եկն, և հասեալ ի Քարափոսն չաուշպաշի Ավտուլայ աղայն սպան. Նօհ աղի լաճ, Ահմատ քեհէն և այլքն փախեան. և

15 զօրքն փաշային զհետ մտեալ բազումք թալանեցին, շատք վիրաւորեցին. և այնպէս ջարգելով եկն և եմուտ ի քաղաքն. և երեք դարգահն և գաղտան դուռն չանկալ և տարաղաջ շինեաց. ով որ դէմ տանէին ի չանկալն ձգել տայր, և ամենայն երկիր դողային ի յահէ նորա. և այսմ ամի գնաց ի վերայ Բաղիշու,

20 զխանն փոխեաց. երեք մեծ աղայ սպան, բազում գանձս էառ և եկն դարձեալ ի Վան։

Եւ ի ՌՃԶԲ (1733) գնաց ի վերայ Սալմաստու և կողոպտեաց զնա. էառ զՋիչագ, երեք չորս հազար մարդ սուր քաշեց, և դարձեալ եկաւ ի Վան. եկաց աւուրս ինչ իմտատի սաֆարիայ

25 ժողովեաց՝ քան զվաթսուն քէսայ աւելի. ի մայիս 10-ին ելաւ Վանայ և գնաց ի վերայ Թաւրիզու և էառ ‖ զԹաւրէզ. և զրա- 133
զումս Պարսից ազգէն կոտորեաց և գերի արաց, որ թիւ ոչ գոյր[12]։

Ի սոյն թուին յունիս 10 օրին եղև[13] տօնամայ երեք օր երեք գիշեր վասն Բաղդատայ, որ Թահմազ յետ դարձրին. և զո-

30 ղրաց Պարսից զրաղումս սպանին զօրքն Թօփալ Օսման փաշային։

Ի սոյն ամի եկին ազգ մի Թաթար, որ մարդակեր էին. գնացին Թաւրէզ՝ մօտ Թամուր փաշայն. և փաշայն ի զնջիլ եղած տուրսաղներէն օրն 15 մարդ թային տայր նոցա, որք մորթէին և ուտէին։

35 Ի սոյն ամի դարձաւ փաշայն Թամուր ի Թաւրիզոյ և եկն ի Սալմաստ. իսկ Վանայ կուլն, որք էին Թամուր աղայի լաճ՝ Ահմատ բէկն, սէյիտ Խզրի լաճն, Ալի աղայի լաճ՝ Օսման բէկն և այլ բազում մեծամեծ աղայք, խորհուրդ արարին թէ փաշայն ոչ թողումք որ քաղաքն մտանէ. և Վանայ մուսալիմ Ալի աղան

40 իմացաւ. մարդ յղեց Սալմաստ մօտ փաշայն. և նա մէկ օր Սալմաստու եկն ի Խօշապ. իսկ Վանայ Հայն և Տաճիկն յահէն ամենեքեան փախեան ի քաղաքն, և նորա շինած տարաղաջնին չանկալնին ջարգեցին և տարդահներն փակեցին. փաշէն երեք օր նստաւ ի Խօշապ, թէ բալքի գան դէմս, սակայն ոչ գնացին դէմն,

45 ոչ առին և ոչ ծախեցին այլ դարգահներն հողեցին. և թուադչիքն ի բադան լցին. իմացաւ փաշայն, որ կռուել կամին, ելաւ ի Խո-

շապայ և եկն ի Ղուռուպաշ գիւղն, և դուրս եղած քրիստոնեայ
ռայէն ամեն գնացին ի մօտն. կու վահենային թէ թալանէ զին-
քեանս. և նա յուսագրեաց ասելով «Մի վահենաք, գնացէք ի ձեր
տեղին և միամիտ նստարուք». յետ գնա || լոյ նոցին ինքն ես 134
5 հեծեալ անտի Ղուռուպաշայ և եկն Կենդանանից առաջոցն անց
գնաց ծովու ափամերքն ի բերդի յետևն. զի հետ ենդիչար աղա-
ռուն բան եղեալ էին. ի գիշերին ել ի բերդն. և լցեալ զթօփերն
ձգեաց ի մէջ քաղաքին. ուր և կամէր ի վերայ աղայոց տանն.
և անճար մնացեալ բացեալ զդուռն քաղաքին ամենեքեան փա-
10 խեան. և ապա եկն փաշայն և նըստաւ ի տեղին իւր. և ղէնդիչար
աղասին կալեալ սպանեաց վասն տալոյ բերդին ինքեան. յետոյ
սարասքարն խնդրեաց զնա և գնաց անդ. և Առնտուուտ փաշայն
կարեաց զգլուխ նորա ՌՃՁԴ (1735)։

ՌՃՁԵ (1736) Քուրդ Իբրահիմ փաշայն եկն ի Վան և աստ
15 սատկաւ։

ՌՃՁԶ (1737) օգոստոս 25, Սէլիմ փաշայն եկն ի Վան. հետ
կլուն կովաւ. խիստ ոաղիլ, դուրս արին քաղաքէն, գնաց։

ՌՃՁԷ (1738) ապրիլ 7, մուսուլցի հաջի Յուսէն փաշէն
եկն Վան. հետ կլուն կռուան ալչախ ինդաւ. Օսման աղի Թզերն
20 էկաւ որչանք թախում ունէր՝ ետուր Օսման աղին, ինքն ահու-
զարով գնաց Մուսուլ։

ՌՃՁԸ (1730) վանեցի Օսման աղայն եղև Վանայ փաշայ։
Ի սոյն թուին շինեցաւ Հայկավանուց սուրբ Աստուածածին։ Եւ
եկաց ի Վան Օսման փաշայն մինչ ի ՌՃՂ (1741)-ին և ապա ման-
25 սուպ ի Մուսուլ ետուն և անդ Յուսէն փաշայն զգլուխ նորա կըտ-
բեց, զի ֆէրմանչի էր. ասեն թէ վասն շինման Ներքին բերդին[14]։

ՌՃՂ (1741) Ուչուջի օղլի Օմար փաշէն եկաւ. յետոյ Մուր-
թազայ փաշայն եկաւ մուսալիմ Սարխոշ Ալի փաշային. ապա
եկաւ Սարխոշ Ալի || փաշայն երեք ամիս նստաւ և գնաց. Մուր- 135
30 թազայ և Օմար փաշայներն մնացին ի Վան. ըռայէն շատ նեղա-
ցան յՕմար փաշայէն. լուսահոգի մեծ Ախիջան աղայն Ղարայ-
սաֆարեան առեալ զՎանայ ըռայէն և գնաց Արղրում ի դուռն
Համալ օղլի սարասքէր վէզիրին. և կամէր ի դուռն թագաւորին
գնալ. վասնորոյ առաքեաց ի դուռն թագաւորին և ծանոյց զա-
35 բարս նորին. և զգալ ըռայեային յԱրզրում և բերեալ ֆէրման
յղեաց Վան ի վերայ Մուրթազայ փաշային. և Մուրթազայ փա-
շայն եղբայրագիր գոլով նմա գժուարանայր առ այն. սակայն
զթագաւորի հրամանն կատարեաց. աւուր մի ելան երկոքին փա-
շայքն ի բերդն վասն քաւշ անելոյ. և անդ կամեցան սպանանել
40 և չեղև հնար. իջեալ ի բերդէն եկին Թաւրիզու դռնովն. քանզի
Մուրթազայ փաշայն ի Զաւուշպաշոնց տունն իջեալ էր. և Օմար
փաշայն ի սարայն հասեալ ի Թաւրիզոյ դրան փոքրիկ ճամոյ
առաջն՝ Օմար փաշայ կամեցաւ Ազապ Աղասանց փոզանն գնալ,
սակայն ձին ոչ գնաց, այլ շահ կանգնեցաւ. վասնորոյ Մուրթա-
45 զայ փաշայն Օմար փաշային հրաւիրեաց ի ճաշ ի տունն իւր. և
նա յակամայ գնաց առ ի չգնալոյ երիվարին. զի երիցս շահ

կանկնեցաւ, և յետ ուտելոյ ճաշին, Աղուան ոմն հարեալ ան ու վայ խանչարաւ, պատճառ սէյր անելոյ խանչարին, և Մուրթուղայ փաշայն չոքեալ ի վերայ սրտի նորա կտրեաց զգլուխ նորին և առաքեաց յԱրզրում, և ապա եկն Ախիշան աղայն իւրայ-
5 նովքն։

ՌՃՂԲ (1743) արծկեցի Սիւլէյման փաշէն եկաւ Վան. մեծ թանկութիւն եղև, որ քիլայ ցորեն հարիւր ղուռուշ || ծախուաւ, լիտր ալուրն երեք ղուռուշ, ամէն բան սոցա նման։ 136

ՌՃՂԳ (1744) Զարրինի իթ Օմար փաշէն տեղս եկաւ մանսուլ չկայր։

10 ՌՃՂԴ (1745) Թաղթայ Սաղկալ Ցուսէն փաշէն. սա սպան զՇեկակ մեծ Օմար աղէն։

Ի սոյն թուին Աստուածածնի պահոց Թահմազն եկաւ վէր Վանայ. մեծ կափանլղ եղև. Աստուած ետուր յետ դարձաւ։

15 ՌՃՂԶ (1747) Զալիք փաշէն եկաւ երկու երեք ամիս եկաց գնաց։

Դարձեալ ի սոյն թուին եկաւ Զաթաջի Ավտուլահ փաշայն. խօջէք շատ տուգանեց. Հայկովանուց թառմէն փլաւ, էրէց կօրհնէին, անտի ևս տուգանս էառ։

20 ՌՃՂԷ (1748) Սինագ Մուստաֆայ փաշայն եկաւ Վան. և ի ՌՃՂԸ (1749) Կարայ Միրաքենց Լալէն մեռաւ. չորս օրէն յետ մարմին գերեզմանէն հանին, գլուխ կտրեցին Ճաւշունենց ղբոնէն կախեցին։

Այսմ թուին, Գուշուկենց Սաֆարն կախեցին, որ Խօջեկանց
25 Շարամիրի տուն կոխեց,

ՌՃՂԹ (1750) Զարրինի Օմար փաշէն տաֆայ եկաւ Վան, որ դրամ կոտրեց, քառասուն փարայ արաց երեսուն երկու փարայ։

ՌՄ (1751) Ավտի Զալալ օղլի հաճի Ցուսէն փաշէն եկաւ Վան. սա սպան զՆապի Հասան, բռէգի Լօլոնն. ադարսղներն շատ
30 սպանեց; խօջէք բռնեց շատ դրամ առեց. հացն էլ շատ թանգ էր՝ կալին քսան ու հինգ ղուռուշ էր ցորէն, ալուր լիտր մինչ երկու ղուռուշ ծախվաւ. ուղարկեց Մուսուլայ շատ հաց երեր, լիտր արասիմ իջաւ. անիծեալ Արաս մօհթասբը էր. || թէ ինչ... էր կե- 137
բաւ գրել չի գար։

35 ՌՄԲ (1753)-ին Թօփչու Մուստաֆայն արաց սարքալայ լաւանդ հետ կլուն գնացին վէր հակարցուն. Թաթար խանն էնպէս ջարդեց, որ ոչխարի պէս, ամէն էլ թալանեց, որ յետք առէջք բաց եկին տեղս։

ՌՄԳ (1754) զարսեցի կոր Ուսուֆ փաշէն հետ կլուն կուվան. մտուցին սարէն, էլան մաչիթ, բռնեցին թուա[ն]քի առջև. յղեց Խօշապայ մարդ իրեյ. ելան դէմ չի թողին, գիշերով գաղտ դռնէն ելաւ փախաւ։

Ի սոյն թուին Եաղիճի օղլի Արզրումայ Իբրահիմ փաշէն էկաւ, տասն ու հինգ օր նստաւ չայիր, էլ մի գնաց։

45 Ի սոյն թուին Շահսուվար օղլի Մուստաֆայ փաշէն եկն և գնաց։

ՌՄԳ (1755) մարտ 1, Գուրջի Հաճի փաշէն իրեյ եկն Նորովանց նստաւ. քաղաք չի թողին. Իսայ աղէն ասքար առեց դէմ գնաց, կովան, շատ մարդ մեռաւ. գեղրանք զմէն փախան. ցանքեր կերուցին. յետոյ ենգիչար աղասին ենգիչարօքն, դաղանօքն առին Իսաղ աղէն տարան մօտ փաշային՝ բարիշան՝ Մարմետ բաշխեց աղին, ինքն մաղուլ եղաւ գնաց. երեք հազար մարդ աւելի ունէր[16]։

Ի սոյն թուին Սինաղ Մուստաֆայ փաշային եկաւ Վան Կօճայ Արապն սպանեց։

Ի սոյն ամի Համբարձման[17] մահն անկաւ. օր հինգ ու տասն կու մեռանէր մինչի Վարդավառ[18]. Աստուածածնին[19] օրն 80—90 Տաճկից հասաւ, 30—40 Հայոց հասաւ մինչև աշուն, ապա վերացաւ ողորմութեամբն Աստուծոյ։

Ի սոյն թուին, սուրբ Խաչի պահոց[20] սուրբ Նշանն հանին երեք օր Տիրամայր եկեղեցին։

ՌՄԵ (1756) Ըռաջար փաշէն եկաւ Վան։ 138

ՌՄԷ (1758) Տաֆայ Շահսուվար օղլի Մուստաֆայ փաշէն եկաւ. հաց շատ խիստ սուղ էր, ցորեն 40 ղուռուշ. հաց օղկէն եօթն փարայ, կորեկ ալուր լիտր քառասուն փարայ։

ՌՄԹ (1760) Աղայ փաշէն եկաւ Վան. Թօսբաք օղլին քահեայ էր, շատ արաց որ աղէն սպանի, չի կարցաւ. աղէն մօտ չգնաց իսկի։ Այսմ ամի Դօրոյի Աղախան խազնէն եհան[21]։

ՌՄԺ (1761) Նոյեմբեր 12, Ֆէղուլահ փաշային եկաւ. ոհ նղկելոյս, զի լուսահոգի եղբայրն իմ մեռաւ։ Սա սպան զԱւտի Քարիմի լաճն ենգիչարի գոլով, ալթմիշ եդի օրթէն կշել ետ ձրմոան ձան վերէն։

Ի սոյն ամի մեռաւ Տուռղու կնիկն։

ՌՄԺԱ (1762) յունվար 15 տօնամայ եղև եօթն օր, զի սօլթան Մուստաֆային տղայ եղև։

Ի սոյն թուին Զօպան աղէն Խոշապայ պարնի լաճ բռնեց, վանեցիք գնացին վէր Ապաղու սաֆար՝ աղզի քասիդ թօփ տարան հետ. թօփ զարկողն Աւթանաիլն էր. Զօպան աղէն փախաւ, բերդն առին։

Ի նոյն թուին ապրիլ 14, Ապարանից սուրբ Խաչն լոյս էջ ի վերայ գմբէթին բաղում աւուրս և բաղում ուխտաւորք գնացին անդ և տեսին։

Ի սոյն ամի եկն Քարիմ խանն ի վերայ Սարդար Վաթալի խանին ի Ցորմի, և հոարեաց զնա տարի մը բոլոր, և ի հասանել դէս ձմռան ռայ եկաւ, և էառ զՈրմի։

ՌՄԺԲ (1763) վախճանեցաւ Շամախեցի Յակոբ կաթողիկոսն, ապրիլ 14 նստաւ Սիմէօն կաթողիկոսն։

Ի սոյն թուին շինեցան՝ Արարուց || ժամատուն, Անկոյանեբուն, Էջմիածնին, Ղուռուպաշայ եկեղեցին, սուրբ Պօղոս եկեղեցւոյ դուռն և տանիքն և այլ բաղում վանքեր։ 139

Ի սոյն թուին սպանին յԵրուսաղէմայ ճանապարհին Զարուհաճի Բարսեղն և Երիցու Նազարն։

Ի սոյն թուին Մարի փաշայն եղև սարսաքէր. և գնաց ի վերայ Պաշիաչուղին, շատ ջարդուաւ, հինգ վեց մարդով անջախ փախաւ եկաւ Արզրում։

Ի սոյն թուին դեկտեմբեր 29 մանզուլ եղև այս Ֆէզուլահ
5 փաշայս, և գնաց Սուվաղ։

ՌՄԺԴ (1764) ապրիլ 1 Խասաքի Քօռ Ահմատ փաշէն էկաւ, շատ ջանաց թէ Իսաղ աղէն սպանէ՝ չի կարացաւ. աղէն սարայն չէր երթայր, այլ փաշայն ամեն օր կերթայր աղենց այգին։

Ի սոյն թուին աղէն իւր տղին՝ Մահմուտ աղային սունաթ
10 թոյի արաց, բայց խիստ զարմանալի թամաշէք կայր ի ֆշանկէն։ Այս թամաշայիս յետի գիշերն զարկին Բարբար Յոհաննենց Աստուածատուրի լաճ՝ Յոհաննէսն սպանեցին յունիս 17. սեպտեմբեր 18 Ահմատ փաշէն գնաց Քիլիս[22]։

Ի սոյն թուին, նոյեմբեր 15, Քոփրի օղլի Նաման փաշէն,
15 որ Խուլ ասէին, եկն ի Վան. շատ հարամ ունէր հետն. իւր երկու լաճուն սունաթ թոյի արաց. հետ նոցա երկու հարիւր տղայ աւելի սունաթեցին։

ՌՄԺԴ (1765) տէր Սահակն օրհնեցին սուրբ Վարդան։ Ի սոյն թուին, մայիս 26 ես գնացի Օրտուվար։

20 Ի սոյն թուին եկին ի Մշոյ հինգ վեց հարիւր ձիաւորք և բակղատայք, հանրմք և խոջայք մէյթարխանայիւք, յաղագս Իսաղ աղայի աղջկան՝ Ուսկուն հանրմի շէրբաթ խմելոյ. հարիւր քսան || թապաղ կու քաշէին, երկու երկու լաւ սարայսար կումաշ 140
քակած ձգած վերայ թապախին. այսպէս ջէրգայ սոլ աղասի Մահ-
25 մատ աղենց գոնէն բոլորան, թօփչոնց գոնէն գնացին աղէնց տուն. շատ լաւ թամաշայ եղև։

Ի սոյն թուին բինայ էմինին սկսաւ բերդ և բանտեր նորոգել։ Ի սոյն թուին, նոյ[եմբեր] 20, Ամիր Մուստաֆայ փաշէն եկաւ։

ՌՄԺԵ (1766) մայիս 11 օրին մեծ և ահագին շարժ եղև
30 ի մայրաքաղաքն Ըստամբոլ, անթիւ տեղիք փլան և շատ մարդ մեռաւ։

Ի սոյն թուին, յունիս 21, Մուստաֆայ փաշայ մանզուլ եղև և գնաց իւր երկիր։

Ի սոյն թուին Եազջի օղլի Իբրահիմ փաշայն եկն ի Վան.
35 և հոկտեմբեր 14 օրին աստ սատկեցաւ։

Ի սոյն օրս, հոկտ[եմբերի] 14 լուսահոգի Ղարասաֆարեանց Սահակ աղայն մեռաւ։

Ի սոյն թուին, մայիսին անձրև եկն, Ցակոփու կուռի չայն այնքան շատցաւ, որ եկն եմուտ Թարվիզու դուռն։

40 Ի սոյն թուին դեկտեմբեր 27-ին էր, որ Գրիգոր առաջնորդ սուրբ Նշանն Տիրամօրայ եհան, տարաւ իգիր Էջմիածին. ի ժամանակս Իսաղ աղային. քանզի տեղս փաշայ չկայր. ձեռնտուութեամբ Պարիկ աղայի և մղտեսի Թումայ աղային, և քանզի Տիրամայր եկեղեցւոյ ժողովուրդքն ոչ կամէին, զվեց խոջայս ի
45 նոցանէ ըմբռնեաց և զվեց հարիւր զուռուշ տուգանս էառ. յառաջագոյն Վարագ կամէր տանել, յետոյ Էջմիածին եղին։ Եւ որ

ինչ կայ սուրբ Նշանի հետն այս է՝ կենաց փայտն, բողէ խաչն,
ինն մանր խաչ մասունքով, մարգարտէ ոսկի ղութի մի || մա- 141
սունքով, սուրբ Գէորգայ աջն, խաչ մի էլ մէջն, Զաքարիայ
վարդապետի խաչն, Յոհաննէս աբեղայի խաչն, տէր Սարգսի
5 սուրբ Նշանն երկու մասունքով ղութի, պստիկ ոսկի խաչ մը,
արծաթէ գտայ մը, և մարգարտէ տօպրակ մը։

ՌՄԺԶ (1767) Աղկսկայու Հասան փաշէն եկաւ Վան։

ՌՄԺԷ (1768) Քուրդ Օմար փաշէն եկաւ. խա[ն]դակներ հոր-
դեցինք։ Մոսկոֆու սաֆտը բացուաւ։

10 ՌՄԺԸ (1769), Նոյեմբեր 6, Գրիգոր առաջնորդ մեռաւ։

Ի սոյն թուին, օգոստոսի 15 Կայմաղ փաշայն եկն Վան։

Ի սոյն թուին դեկտեմբերի մէջ, յետ մեռանելոյ Խալիլ աղա-
յին, Թամուր աղայն կամէր լինել սոլ աղասի, ոչ ետուն նմա.
վասնորոյ անկաւ խռովութիւն ի մէջ իւրեանց. և սկսաւ կուլն
15 դառնալ ի վերայ Թամուր աղային. միաբանեցան ընդ Օսման
փաշայի տղային, դաշինս եդին. յետոյ օր աւուր յաւելան Շաթրը
օղլի Իսմայիլ ըէգն և էհսար աղասին, Աշուրի լաճն՝ Իսահանի
Իբրահիմ ըէգն, Իրըղի լաճերն, Սօղրաթ օղլին, և այլ անթիւ
մարդիկ ամէն եղէ[ն] ի կողմն Թամուր աղային, ե ղի տեղս փաշայ
20 չկայր այնպէս սիլահով շուրջ կուգային խռըլ գռըլով. յաւուր
միում վստահացեալ հարին փրշտով զկորն մուֆտին, որ Կասըմ
աֆանտի կասէին, մեծ շուն էր. ե սպանին ի մէջ փողանին, և
ապա սկսան կռվիլ ռամազան մինչ ի գլուխ. շուկայք դատար-
կեցին ե բոլորք փակեցին ի ահէ թալանելոյ. և մարդ ոչ կարէր
25 դուրս ելանել ի յահէ գուլուլայիցն, որ այնչափ հարկանէին մի-
մեանց. իլահքի դիշեր՝ յետ || մաղրպին. քանիցս անգամ էրիզ 142
արարին ի վերայ միմեանց և ոչ կարացին. ռամազանին մինչ
ի բայրամ կռիւ արարին, մինչև՝ որ խապար եկաւ, թէ «Դամաթ
Յուսէն փաշէն Մուսուլայ կուգայ տեղս»։ Յաւուր միում էհսար
30 աղասին, Թամուր աղայի խօսքով, գնացեալ էնգիչար աղասու
հետն զրուցեցին. գիշերով Դամուր կափուն բացին վերին բերդն,
ցածրի բերդն Կասապ օղլի Ուսուֆ աղայն էր բռներ, ըսկըսան
երկու կողմանց և ի մաչիթացն և ի մաթարխանեբացն միմեանց
հարկանել, երկու երեք հարիւր մաթտրիս աւելի կայր, կամէին
35 թօփ ձգել ի վերայ Իսազ աղայենց տան, բայց ոչ կարացին՝
երկան, քանզի Իսազ աղայի թաթարն միշտ գնայր գայր աստ
և անդր, և փաշայն ևս մօտեցաւ գալու։

ՌՄԺԹ (1770) յունիս 1 Դամաթ Յուսէն փաշայն եկաւ Արճէշ.
ելան Թամուր աղան և Օսման փաշի լաճն, երեք չօրս էլ մօլայ
40 մեծագլուխ գնացին հասան Բանտի-մահուն. մօլէքն յղեցին մօտ
փաշէն գանգատ վէր Իսազ աղին. փաշէն նեղացաւ, թէ «Ես կուգի
քաղաքն, էլ դուք ինչի՞ եկիք». մօլէքն վերուց երկուքի վիզն ի-
զարկ, Նաֆասի մօլէն, Ռասուլ աֆանտին խրկեց Աղթամար որ
ճգնեն. աղէք, կուլ լսան՝ խէծան, բերդան փախան Բայազիտ, միւս
45 օր Իսազ աղէն իւր բօլուկիւն գնաց դէմ փաշին՝ խալաթ հագաւ.
փաշէն առեց եկան քաղաքն. գիր օղորկեց Բայազիդ, թէ «Ձեզ

բոայի էկէք». էն վաղտ, որ մտաւ քաղաք, Կարայ քէհէն Ջաֆար
ըէկի լաճու վիդն իզարկ, Թաղթայ Սազկալի վիզն իզարկ. քսան
օրից յետ Թամուր աղէն, միւս աղաների հետ՝ կուլն ամէն, եօթն
ութ հարիւր ձիաւորով, եկան լցուան Էգեստար[23]. Գօրգօենց || թաղ, 143
5 Աշուրենց թաղ, Ցասան բագենց թաղ. բիրդան մաթարիս բռնե-
ցին. Կարա քէհէն, Իսաղ աղէն գնացին. երեք թօփ տարան հետ
Կլոր տար բռնեցին. քառասուն յիսուն թօփ աւելի զարկին տնե-
բաց. վերջ կուլ տեսաւ չի եղներ, մէկ մէկ մեծեր տօնմիշ եղան.
կուլ, որ վէր Թամուր աղին էր, զմէն փախան, մնացին երեք ֆէր-
10 մանլի աղայքն. անճար մնացեալ իւրեանքն էլ փախան, Օսման
փաշայի լաճն գնաց ի Բաղդատ, Թամուր աղէն ե Շաթըր օղլին՝
Ամետի։

ՌՄԻ (1771) յունվար 17 սուրբ Սարգսի պահոց երկուշաբ-
թի Իսաղ աղէն մեռաւ. հազար ափսոս։

15 Ի սոյն թուին մայիս 5 Թամուր փաշէն, Օսման փաշի
լաճն եկին Վան. Օսման փաշի լաճն ելաւ սաղ աղասի, Շաթըր
օղլին՝ ազապ աղասի։

Ի սոյն թուին Կայմաղ փաշէն թուղ ոչ ունէր. ի սորա
աւուրս մուֆթու թոռ ձեռ խկեցին. երկրով գնացինք՝ Հայ, Տաճիկ
20 Մաղազաճի օղլոնց իգին, ծառեր կտրեցին, լամուկ փախաւ։

ՌՄԻԱ (1772) մայիս 15 Վանայ կուլն երկու խարաջ առին
Հայոց, կէս ղուրուշ էլ խարամ խարաջ։

Ի սոյն թուին սեպտեմբեր 1 սիլախտար Խալիլ փաշէն
եկաւ. Վան։ Թամուր աղէն էլաւ սաղ աղասի, քէհէն և կուլ գնացին
25 վէր Նարեկայ Սէյիտ աղի լաճ, ոայ եկաւ՝ բերդ քակեցին։

ՌՄԻԲ (1773) Խալիլ փաշայն գնաց Արծկու Մուրատ բէգին
վրայ։

ՌՄԻԳ (1774) Մալագ Ահմատ փաշան եկաւ Վան։

Ի սոյն թվին Թամուր փաշայն թուղ առեց եկաւ Վան, որ
30 գնայը Քարքուտ մանսուպ։ Ի սոյն թվին Ահմատ բէկն ելաւ սաղ
աղասի. Օսման փաշայի տղայն բայրաղ || չէր տայր. կուլ տօնագ 144
էր, փլաւ կերցնելով, հալաթ տալով, ղոռով բայրաղ բերել ետուր։

ՌՄԻԴ (1775) օգոստոս 21, Վանեցի Թամուր փաշայն եկն
Վան մանսուպ. սկսաւ ողորմութիւն հաւաքել Տաճկաց. սա սպան
35 զՏաւուտ աղի լաճ՝ Օսման աղէն ե զՍօղրաթ օղլին։

ՌՄԻԵ (1776) Ահմատ բաղ կափուչիպաշին գնաց Ըստամ-
բոլ։ Ի սոյն թիւն եկաւ 120 քէսայ միրի խազնայ Թամուր փա-
շային։ Սեպտեմբեր 8 օրին Ախիջան աղէն գնաց Ըստամբոլ. Ա-
տուած բանն յաջողէ։

40 ՌՄԻԶ (1777) սեպտեմբեր 1, Ախիջան աղէն եկաւ Ըստամ-
բոլայ. Թօփչոնց Ռասուլ կախեց փաշայն։

ՌՄԻԷ (1778) մայիս 28, այս Թամուր փաշայս մեծ սաֆար
արաւ վէր Բաղիշու, ուր հետն ունէր և Մաղսուտ փաշայն Մշոյ.
և գնաց անգ նստաւ աւուրս 17, երկիրն ամեն ոայ եկին. Աբութ
45 բէկն, որ ի մէջ բերդին էր, 23 քէսայ ըստակ տուաւ. ապա գաղտ
ի բերդէն փախաւ. և կալեալ ութ մեծամեծացն զէնջիլով ի Մուշն

առաքեաց. և զերկուսն սպան և առեալ հարկս բազումս և մեծաւ յաղթութեամբ և փառօք եմուտ ի Վան։ Այս Թամուր փաշայս զչափն՝ կշռի քարերն, բաղբղի գազերն, ախթարների քարերն ամէն դամկալամիշ արայ[24]։

5 Ի սոյն թուին նոյեմբեր ամսոյն գնաց Աղբակու նստած էլն իզարկ. երեք չորս հազար ոչխար իրեր. էկաւ տեղս՝ Զպուխսարան Օսման աֆանտին խեղդեց. սորա կին երեք էլ ուրիշ Տաճկի կնիկ իդիր կայմին քշեց. Ղարայ Սաֆար օղլու մորուսն կնդել ետ, որ սարի մէլիք էր։

10 Ի սոյն թուին, դեկտեմբեր ամսին || այս Թամուր փաշայս 145
Մխիթարենց Բաբանիկն Ապով, որ գիշեր կոր Կազկէ տուն բռնեցին. եօթն անուանի կնիկ գնել ետուր կամին կշեց, որ են այսոքիկ՝ կոր Կազկէ աղջիկն, Գուլխնչու Եղիսէն, Խանթումանն, Փաչալ աղջիկն, Օտայպաշու կնիկն, Կազանչու կնիկն, Նորշէնցի
15 կնիկն սերսուփներ[25]։

ՌՄԻԸ (1779) յունվար ամսին Վանայ ծովն պաղեցաւ եօթ շաբաթ, որ փաշայի մանղիլքն ի վերայ ծովուն դային և գնային ի Ցարճէշ։ Ցայսմ ամի Ըստամբոլայ ծովն, որ ասի Բոզաղիչի[26], պաղեցաւ, զի կարի ցուրտ եղև, որ ի Ըստամբոլ, Զզիրայ և
20 Բաղդատ մեծամեծ ձիւնք եկին, որ այլ տարիք չէր եղեր։ Ի սոյն թուին Քարիմ խանն սատկեցաւ. Սարդարի լաճն Սպահան սպանեցին, յուլիս 13-ին այս Թամուր փաշայս գնաց վերայ Զուլամերկու Աւտալ բագին. 25 քեսայ ըստակ ետուր լաճն յղեց մօտ երեսուն աւուր վերայ.. յետ դարձաւ եկաւ քաղաքն։

25 Նոյեմբեր 15 այս Թամուր փաշայս ի մէջ գիշերին Քաչալ աղջիկն և իւր էրիկն դէմ մէկմէկու կախեաց, և Դալի Իբրահիմի լաճն ի մէջ սարային փարալամիշ արաց, և նորա տուն և Սէլիմ աֆանտու լաճու տունն այրել ետ։ Ի սոյն ամսի Զրբաշէնց Ցակորն ղԿայֆաճի Սարգսի աղբէրն դանակով սպան. շատ ջառիմայ
30 առին ի նմանէ։

Ի սոյն թուին յուլիս 6-ին արքայն Վրաց Հերակլ եկն ի վերայ Երևանայ քաղաքին քառասուն հազար զօրօք և շատ աւերութիւն արար՝ երկիրն բոլոր քանդեաց և այրեաց, վերջ հարիւր յիսուն գեօղ քշեալ տարաւ, երեսուն հազար ոգիս և հարիւր
35 հազար տավարս համարով, որ տասանորդն իւր էր՝ տասն հազար տավար. || և ինքն յանկարծ ի մարդկանէ վերացեալ գնաց Թիլֆիզ[27]։ 146

Ի սոյն թուին դեկտեմբեր 27, որ էր օրն ուրբաթ, ահագին շարժ եղև ի քաղաքն Թաւրիզ, որ բոլոր քաղաքն ամէն տապալեցաւ, և անթիւ մարդիկ մեռան և ի ներքոյ հողին մնացին, որ
40 ականատեսքն ասացին, թէ «Ահագին քաղաքն իբրև բնական բլուր մի եղև», որ ամենևին քաղաքի նշմարանք ոչ երևէին. նաև շրջակայ կասարայք նորին և գիւղօրայքն՝ Գունայի, Թասու, Սալմաստ, Խոյ, Ցորմի և ի քաղաքս մեր Վան ևս շարժեցաւ քանիցս անգամ, բայց ողորմութեամբն Աստուծոյ ոչինչ վնաս եղև։

45 Ի սոյն թուին Սամարճի Արրահամու տղայ Շահէն, որ նոր փեսայ էր, և Արղրում կերթար գայր. սա քանի բեռ պարութ

առեր էր, որ վերոյիշեալ քաղաք տանէր. յանկարծակի մէկ րեռ
ալշմիշ եղև մէկ լիք կարաս պարութի հետ. Աստուած նշանց չի-
տայ մարդոյ, շատ ղիան ետուր ուրենցն էլ. երկրին էլ. զի ական
թոթափելն բոլոր տունն քանի ղրկեցի տնօվ դաշտ եղև. և հինգ
5 հոգի Մնացին ներքոյ հողին. և բազում ինչք ու ապրանք ցիր-
ուցան եղէն ի ներքոյ հողին և այլ տեղիս. լուաք թէ գերան մի
ձգեալ էր ի Տաճկաց՝ գօտերն, ե խախտեալ տանց դրանց և փէն-
ճէրայից. ե այլ իրաց ոչ ոք կարէ գրով ասել. մինչ զի Ի-
կալայ դուռն և ի Թարվիզու դուռն ե շրջակայ մանլաքն բոլոր
10 քաղաթլամաքն և ջամերքն և երդոց չարչիվաքն ամէն վար թա-
փեցան։ Եւ նոյն պահն երկրի մերձաւորքն և սաղ աղասին, ոօլ
աղասին, բոլոր Հայ և Տաճիկք անդ եկին, և սկսան առ ժամայն
պղել զհողն. լինի թէ ներքոյ || Մնացեալքն ողջ դտանիցեն. ջանք 147
տալով գտին զնոր հարսն և փոքր աղջիկ մի ի գիրկն. իրր թէ
15 կամեցեալ էր փախչիլ, և անդէն եկեալ էր տուն ի վերայ, և
մեռեալ էին երկոքեան. և ի միւս օր հանին ես երեք մեռեալ, որք
էին երկուք մեծ տղայ 15 և 20 տարոյ և աղջիկ մի. և յետ երկու
ե երեք աւուրց, որք զհողն պղէին այրեցեալ գերանքն և ինչք
դուրս հանէին ամէն ոչընչացեալ և այրեցեալ. և այն էր զարմանք,
20 որ հիմն ի վեր էր ելեալ, և վերն յանդունգս իջեալ. և այնպէս
խառն ի խուռն էր եղեալ, որ ոչ ոք կարէ զկերպ բանին գրել[23]։

ՌՄԻԹ (1780) ապրիլ 15 հինգ հոդի Թուրք սպանին ի գի-
շերի Տաճիկ մի ի մէջ իւր տանն. ե իմացեալ փաշային ե աղա-
յիցն գտեալ զԹրքերեն երկուքն ի կաղուխ էզարկ, և մին կախեաց
25 և միւսքն փախան, և փաշայն էր վերոյիշեալ Թամուրն. սորա
ջորին ծնաւ, զոր մեք աչօք տեսաք ի սարայն սատկած քան
զկատու մի։

Ի սոյն թուին յուլիս 16, Սահապ Ախիճան աղին հետն
գնացինք Աղթամարայ սուրբ Խաչն. ուխտ արինք Վարդավառի
30 կիրակին։ Ի սոյն օր փոխեցաւ առ Աստուած լուսահոգի Սիմէոն
կաթողիկոս և նստաւ յաթոռն տէր Ղուկաս սրբազան կաթողի-
կոսն. տէր Աստուած կեանս յերկար պարգևեսցէ նմա։

ՌՄԼ (1781) սոյն Թամուր փաշայս յունվար 11-ին հար-
սանիք արար իւր տղայ Ալիրէգին, քսան տիւ և քսան գիշեր, որ
35 այսպէս հարսանիք ոչ ոք չէր տեսեալ ի Վան, զի անհամար և
անթիւ էին բարութից եղեալ խշանգք, և ձիաւորք, և չարխի
ֆէլագք, ե ֆրանկ ուշաղիք, յաւայի ֆշանգք. և || փոքր թօփեր. 148
զի երկու բերդ էին շինած ի մէջ սարային. գիշերն յետ ամեն աթաշ-
բաղ օյինացն երկու բօլուգ լինէին, և ի վերայ բերդից երիշ
40 տանէին, որ տեսողացն երևիր թէ սարայն բոլոր նաև մարդիկն
ամէն ի կրակ էին, քանզի ֆշանգն իրրև կարկուտ գայր միմեանց,
այլ և չուանի վերայ խաղացողքն, և գուլաշ բռնողքն, և օդկա-
պազք, և սազանդարից հաշիւ ոչ գոյր. նաև քսան տիւ և գիշեր
բոլոր երկիրն անդ պատուած էին՝ կերակրին և էմադին, կայֆա-
45 յին և թութունին, ստակին և խալաթին թիւ ոչ գոյր, զի բոլոր
երկիրն անդ հաւաքեալ էին, թող թէ ի դրսէ եկեալ հիւրքն. իլ-

լուհքի Թոյ բակին, որ երեսունէն աւելի նաֆար ունէր, որ քահեայ և խազնատար, չաուշ և չուխաաարք էին, Թող Թէ այլ խրդմաթքարք, և եդա[ք]ջիք. քանզի եօԹն ահագին մեծ շուն եալտուզլի Թղթէ կալխանով և Թախըմով ետուք կու քաշէին առէջն. իւր մեհԹարհանային և դափիփաջային բոլոր պաշգայ էր, յուքմ և բուուրդում ի փաշայէն առեալ էր. բոլոր երկիրն որքան այեան և անուանի մարդ կայր ամէն տուգանեց. քանզի ասէին Թէ մինչ ի ուԹ և տասն քէսայ ըստակ էաո Թէ փաշայէն, և Թէ այլոցն. քանզի երկու անգամ փաշային կալդըր արաւ. կարի մեծ և զարմանալի հարսանիք էր, որ մեծ և ծեր մարդիկն ասէին Թէ Վան, որքան որ Վան է, այսպիսի հարսանիք եղեալ չէ. և այս ամենայն դէլուր և գիտուրից վերայ. և ամենայն գործոց վերակացուք էին փաշայի դանճապետ Շէքար աղան և փաշայի վաճառականապետն Ղարասաֆարեան խոճայ Ախիջան աղայն։

ՌՄԼԵ (1786) սեպտեմբեր 17, || վանեցի Թամուր փաշայն կրկին եկաւ Վան. շարաթ օր դիվան արաց. Ջամուշչի օղլիք, ենգիչար աղասին և սաղ աղասին ի մէջ սարային սպանեց. այս ենգիչար աղասին մղտեսի Յոհանենց այգու մօտն ջազաց էր չիներ, Թամուր փաշայն քակեց, և այլ բազում յաղԹուԹիւն արաց, զոր ոչ գրեցաք։ Ի սոյն Թուին այս Թամուր փաշայս պլիկ կըտրել ետ։ 149

ՌՄԽԵ (1796) յուլիս մէկ օրին վանեցի Ահմատ փաշէն մեծ սաֆար արար, գնաց ի վերայ Խոյեայ էլին՝ յագաբանցի Ալի աղային, բազում զօրօք. երեք հազար մարդ աւելի կայր և ոչ պակաս, քանզի Թամուր փաշայի լաճ՝ Հասրաթ բակն, քահեայ էր. և ունէր ընդ ինքեան սաղ աղասին իւր մեծ եղբայր. և սօլ աղասին, ՇաԹըր օղլին, Նաման աղէն և այլ բակերն և օջախլիք գնացին մինչև Բերկրի, 12—13 օր նստան. յետոյ ի մէջ գիշերի յանկարծակի հեծան և քշեցին ի վերայ Ալի աղային, քանզի Ալի աղայի վերայ կէր 1200 մարդ, և մերոյս կէր 3000 աւելի և ոչ պակաս, քսան և չորս բայրաղ լաւանդ կէր մերում. ամենեցուն բայրաղ տարան. սաղ աղասին, ՇաԹըր օղլին, Նաման աղէն. և այլ բազում Տաճիկք և Քիւրդք ըսպանեցին և մերկացուցին և եարալի արին, որ ոչ գոյր Թիւ. քանզի հարիւր մարդ ճօրով սաղ պըծաւ իրե Վան. էն էլ ոտով մերկ, բոբիկ, որ այսպիսի խայտառակուԹիւն մարդ չէր տեսեր. և Վանայ ասքարին այսպիսի խայտառակուԹիւն չէր հանդիպեր. Աստուած հեռու անէ։

ՌՄԽԶ (1797) ի սոյն Թիւ յուլիս 20, Էմին բագն էլաւ սաղ աղասի. փետր. 28 Ահմատ փաշէն պաղաւ։ Ի սոյն Թիւ, ապրիլ 2, հինգշաբԹի, || Ղարասաֆարեան Ախիջան աղայենց տունըն այրեցին, որ կասէին Թէ վեց հարիւր քէսայի սալԹ մալ գնացեր տնէն, որ յետոյ Ախիջան աղան ինքն և իւր եղբայր ՑաբուԹիւն աղայն գնացին Արզրում մօտ քօր Իւսուֆ փաշայն և նա արզ արաց Էստամբօլ, որ մուշապիր եկաւ մալին ԹաւԹիշ անելու մէկ և երկու անգամ. Թէպէտ ժողովեցին, բայց ղուռուշի մէկ փարէն էլ ձեռ չինգաւ. այս ամենայն չարիք գործողներն Ջամուշչոցն Ցու- 150

սէն և Խալիլ աղայքն եղէն. պատճառ թէ Ախիջան աղայն եղև պատճառ, որ մեր հայրք Թամուր փաշայն սպանեց։

Ի սոյն թիւ մայիս 2 սաղ աղասի Էմին բագն փաշայ եղև Վանայ, թագաւորէն թղերն ընդունելով։

5 Ի սոյն թիւ յունիս 9 աշխարհաժողով արին Ցանկուսներ. պատճառ թէ Էմին փաշէն խարջ սալեալ շատ բանի ղուլում կանի. շուկայք փակեր էին. քանի անդամ յղեց թէ եկէք բացէք, զի եկին, յետոյ բարկացաւ, յունիս 10 օրին Ֆարջուլենց Մանուկ աղէն և Խաչկանց մահտեսի Խաչատուր բռնեց կախեց. պատճառ

10 որ կասէին. թէ Ախիջան աղենց տուն այրելուն և շուկէք փակելուն պատճառ Մանուկ աղայն եղև, որ սպանելէն յետոյ հարիւր քէսայից աւելի թէ ըստակ և թէ մալ բերեց կէրաւ։

Ի սոյն թիւ յունիս 15 Զտմուշչոնց Ցուսէն և Խալիլ աղայքն փախեան։

15 Ի սոյն թիւ, ՌՄԽԶ (1797), յունիս ամսոյն Խադրմ[20] շահն սպանեցին։

ՌՄԽԷ (1798) փետրվար ամսոյն Սողրբեթենց Զալիլն Արծկէ սպանեցին. դեռ կողընայ, որ պատճառ սա էր եղեր Ախիջան աղաչենց տունն այրելուն։

20 Ի սոյն ամսոյ 18-ին, Վէյիս աղէն և Թօփչոնց Օսման բագն 151
ի մէջ սարային խեղդեցին. պատճառ վասն Ախիջան աղայենց տուն այրելուն։

ՌՄԽԹ (1800) Էմին փաշայն խանդակներ հորդել ետ, որ մահլայ մահլայ գնացին հորդեցին։

25 Ի սոյն թուին վախճանեցաւ Ղուկաս Քաթողիկոսն. և յիշատակեցին զՍվսէփ։

Ի սոյն թուին վախճանեցաւ սրրոյ Երուսաղէմայ Պետրոս պատրիարգ և նստաւ վանեցի Թէոդորոս պատրիարքն։

Ի սոյն թուին սեպտեմբեր 31-ին, Վարագայ խաչի տօնին,
30 Թամուր փաշայի որդի Ցասրաթ բագի թղի մուժաէն || իրե. այն 152
վախդ, որ խալէ լսաւ, երկիրս շարժի նման դղրդաց։

Ի սոյն թիւ հոկտեմբեր 11, ուրբաթ գիշեր, երկինք որոտաց, երբ կայծակ թալեց ի վերայ բերդին Վանայ. ներքին կողմէն քանի կտոր մեծ քարեր պրծաւ անկաւ. դուռ և տանիս ջարդել

35 և ծակել. ժամ 11-ին, որ ժամահարներ կու դիպէն, այն վախդ սուրբ Առաքելոյ ժամահար, որ Կիրակոս ասէին, այդ տեղն որ քարեր կուդայ, մին ի քարանց կանկանէ սորա վերայ կու մեռանի. տէր լուսաւորեսցէ հոգին։ Եւ ես տրուպ Մարտիրոս խալիֆայն, այն վախտ արթուն էի և բաց տեղ, զոր աչօք իմովք

40 ականատես եղէ։

Ի սոյն թիւ, դեկտեմբեր ամսոյ ես՝ Մարտիրոս մտայ աշխարհի կարք։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տես Ս. Անեցի, էջ 79։ Վերջինիս մոտ նշված է մեր թվականության ՈՒՀ (626)-ին, որը Ս. Անեցու հաշվով համապատասխանում է հայոց ՀԴ թվականին։

2. Լ. Թեմուրը մահացել է 1405 թվին։

3. Ջահանշահը Շամշուլգեն գրավել է 1440 թ. (տես Մծ, 1, էջ 119, 124, ծանոթ. 43)։

4. Այս վկայությունը ստույգ չէ, պետք է լինի 1587 թ.։

5. Տես և հմմտ. վերևում, էջ 305։

6. Այդ մասին տես վերևում, էջ 284, 285, ծանոթ. 8։

7. Բնագրում հրատարակիչը փակագծերի մեջ գրել է. «գահեկանի մի չորրորդ»։

8. Այս մի քանի վկայությունները մանրամասն տես Մծ, 1, էջ 361—364։

9. Հրատարակիչն այնուհետև փակագծերում գրել է. «երկուորեակ»։

10. Տե՛ս Մծ, 1, էջ 366։

11. Այսինքն՝ 1716 թ. ապրիլի 1-ին։ Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 367։

12. Այս մի քանի տեղեկությունները մանրամասն տե՛ս Մծ, 1, էջ 368—371։

13. Բնագրում սխալմամբ տպված է «եկնՁ», միտքն անիմաստ է մնում, ուստի այն ուղղեցինք ըստ Անանուն Վանեցու, տես Մծ, 1, էջ 372։

14. Այս տեղեկությունները տես Մծ, 1, էջ 372։

15. Այսինքն՝ 1745 թվի օգոստոսի 12—17-ի ժամանակամիջոցում։

16. Բնագրի մի շարք տվյալները համեմատիր Մծ, 1, էջ 373—374։

17. Այսինքն՝ 1755 թվի հունիսի 1-ին։

18. Այսինքն՝ մինչև 1755 թ. հուլիսի 30-ը։

18. Այսինքն՝ 1755 թ. օգոստոսի 13-ը։

20. Այսինքն՝ 1755 թ. սեպտեմբերի 11—18-ի ժամանակամիջոցում։

21. Տե՛ս Մծ, 1, էջ 374։

22. Այս մի քանի տեղեկությունները տե՛ս նույն տեղում, էջ 374—375։

23. Իմա Այգեստան, Վանի թաղերից մեկը։

24. Այս վկայությունները հմմտ. նույն տեղում, էջ 375—378։

25. Տե՛ս նույն տեղում, էջ 378։ Այստեղ տարեթիվը տարբեր է։

26. Իմա Դարգանելի նեղուցը։

27. Այս մի քանի վկայությունները տե՛ս Մծ, 1, էջ 378—380։

28. Տե՛ս նույն տեղում, էջ 378—379։ Այստեղ տարեթիվը մեկ տարով տարբեր է նշված։

29. Իմա Աղա Մահմեդ խան։